ՆՈՐ-ԴԱՐ

№ 148 ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ 5 Սեպտեմբերի **1886** Ուրբաթ 5 Սեպտեմբերի ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 148

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
հատով 5 կոպէկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Нуръ-Даръ»
կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամէն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար՝ կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Բարձրագոյն հրաման.—Լուրեր
Թղթակցութիւններ — Շուլավէր։
Քաղաքական. — Բալկանեան գործեր.—Ֆրանսիա.—Լուրեր։
Խառն լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրներ։
«Նոր-Դար»-ի պատասխաններ։
Բանասիրական. —Բարեգործներ (շարունակ.)
Յայտարարութիւններ։

Այս համարում սկսում ենք հրատարակել Կովկասում զինուորագրութիւն մտցնելու մասին սահմանած օրինական կանոնները։ Զինուորագրութիւնը մտցնելով մեր երկրում, մեր ժողովրդի համար հարկաւոր է գիտենալ նրան վերաբերեալ պայմանները.

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐԱՄԱՆ

Անդրկովկասեան բնակիչների և Կուբանի ու Թերեքի նահանգների այլազգիներին զինուորական ծառայութեան ենթարկելու մասին։—Պետական խորհուրդը օրէնքների և պետական տընտեսութեան միացեալ դեպարտամենտների ընդհանուր ժողովում քըննելով Անդրկովկասեան բնակիչների և Կուբանի ու Թերեքի այլազգիներին զինուորական ծառայութեան ենթարկելու վերաբերեալ պատերազմական մինիստրի կողմից արած առաջարկութիւնը, հետևեալ որոշումը յայտնեց։

I) Անդրկովկասեան բոլոր բնակիչների (ինչպէս բնիկ, նոյնպէս և եկուոր) նաև Թերեքի և Կուբանի այլազգիներին ենթարկել զինուորական ծառայութեան, համաձայն այդ ծառայութեան վերաբերեալ կանոնագրութեան (կանոնագիրք. հատոր IV գիրք I-ին, հրատ. 1876 թ. յօդ. 1—224) միայն փոփոխութեամբ և լրացուցիչ կանոններով, որոնք ցոյց են տուած ներկայ կանոնագրութեան III յօդ. ի նկատի ունենալով IV յօդ. ժամանակաւոր կարգադրութիւնը։ Մահմեդական դաւանութիւնից ընտրելի զինուորներից այդ պաշտօնը վարելու փոխարէն պահանջել յօգուտ պետական գանձարանի դրամ և այդ հարկահանութիւնը կոչել հարկ զինուորական ծառայութեան փոխարէն։

II) I-ին յօդուածում որոշած միջոցները գործադրել սկսելով 1887-ի զինուորագրութիւնից, յետաձգելով նըրանց գործադրութիւնը Բաթումի, Արդուինի, Սուխումի (բացառութեամբ Օկումի գաւառակի) նահանգներում և Քութայիսի, ինչպէս և Ղարսի ու Սև ծովի նահանգներում, մինչև 1889 նոր զինուորագրութիւնը։

III) Զինուորական ծառայութեան վերաբերեալ կանոնագրութեան յօդուածների փոփոխելու և լրացնելու համար (օրինագիրք հատ. IV. գիրք I. հրատ. 1876 թ.) որոշել.

1) Կովկասեան երկրում բնակւող և իրենց հասակին համաձայն զինուորական ծառայութեան ենթարկւող գաղթականները, որոնք իրաւունք ունին օրէնքով դուրս գնալու Ռուսիայից (օրինագիրք հատ. XII. յօդ. II. օտարազգի գաղթականներին վերաբերեալ կանոնագ.) և կամենում են օգտուել այս իրաւունքից, ենթարկվում են սոյն կանոնագրութեան (հրատ. 1876 թ.) ծանօթ. 3-րդ յօդ. կարգադրութեանը։

2. Կովկասեան երկրում ամէն տարի զինուորագրութիւնը և դրանց վիճակով պաշտօնի մէջ մտնելը, կատարվում է հոկտեմբերի 25-ից սկըսած մինչև դեկտեմբերի 31-ը։ Այդ ժամանակամիջոցից բացառութիւն կարելի է անել այն դէպքում, եթէ 76 — 78 յօդուածի մէջ ցոյց տուած զանազան անձանց և հիմնարկութիւնների մասին երկրի կառավարչապետը կ'միջնորդէ, որը այս առարկայի վերաբերեալ ամէն մի վճռի մասին պիտի յայտնէ պատերազմական և ներքին գործերի մինիստրներին։

3. Անդրկովկասում և Թերեքի ու Կուբանի նահանգներում բնակւող այլազգի անձինք, որոնք գտնվում են իսկական ծառայութեան մէջ, բացի կամաւոր զինուորներից, ինչպէս և գերդաստաններ և ծուխեր, որոնցից այս անձինք ընդունուած են ծառայութեան մէջ, ազատ են անձնական, պետական, զեմստվօյի և հասարակական դրամական հարկերից, իսկ այդ ժամանակամիջոցում բերքի հարկից ազատվում են միայն ծառայութեան մէջ մըտնող անձինք։ Պահեստի զօրքի մէջ գըտնւող անձինք կամ նրանք, որոնք պահեստից հրաւիրուած են զօրախմբի մէջ, ինչպէս և գերդաստաններ կամ ծուխեր, որոնց նրանք պատկանում են, օգտվում են յիշեալ արտօնութիւններից մի տարի ժամանակով, սկսած նրանց պահեստի մէջ ընդունած կամ ծառայութիւնից արձակած օրից, ըստ պատկանելոյն։

4. Կովկասեան երկրի այլազգի բնակիչների մէջ համաձայն ընտանեկան դրութեան առաջին կարգի արտօնութեամբ օգտվում են (բացի այն անձանց, որոնք յիշուած են զինուորագրութեան կանոնագրութեան 45 յօդուած. 1-ին հատուածում), ա) այն փեսան, որը իւր աներոջ կամ որը և այրի զօքանչի տան մէջ միակ աշխատաւորն է և բնակվում է աներոջ և զօքանչի հետ միասին, կամ թէ նրանց հետ մի ընտանիք է կազմում, բ) ընտանիքի միակ արու զաւակը։

5. Կովկասեան բնիկների մէջ ուրիշի երեխաներ որդեգրելը, որոնք ազնուական չեն, պիտի ապացուցանուին 1885 թ. յունվարի 15-ին Բարձրագոյն հաստատած պետական խորհրդի կարծիքը սահմանած օրէնքով։

6) Էջմիածնի ճեմարանի աշակերտների վիճակով զինուորական ծառայութեան մէջ մտնելու ժամանակամիջոցը, համաձայն նրանց յայտնած ցանկութեան յետաձգվում է մինչև ուսման աւարտելը՝ 28 տարեկան հասակը։

7) Էջմիածնի ճեմարանում կամ հայոց հոգևոր սեմինարիաներում յառաջադիմութեամբ ուսման ընթացքը աւարտող անձանց, ուսումը աւարտելուց յետոյ, իրաւունք է տրվում մի տարուայ ընթացքում մտնել հոգևոր կոչման մէջ, որով և ազատվում է զինուորական ծառայութիւնից։

8) Կովկասեան դպրոցները 4-րդ կարգի դպրոցների թվում հաշուելու համար, (զինուորագրութեան արտօնութեան վերաբերմամբ) պիտի դիմել Կովկասեան կառավարչապետին որ այդ մասին համաձայնութիւն պէտք է կայացնէ ազգային լուսաւորութեան և պատերազմական մինիստրների հետ։

9) Թերեքի և Կուբանի նահանգներում զինուորագրութեան համար թոյլատրվում է բաժանել նահանգները (գաւառները) մի քանի զինուորագրական գաւառակների։

10) Եթէ Կովկասեան երկրում դըժուարութիւն հանդիպի կազմելու յիշեալ գաւառակները այն չափով, որ որոշուած է սոյն կանոնագրութեան 71-րդ յօդուածում, այն ժամանակ գաւառակներ կազմելը այդ չափից դուրս առաջարկվում է վճռելու կառավարչապետին։ Նրան և առաջարկվում է վճռելու արդէն կազմած գաւառակների մէջ անելիք փոփոխութիւնները։

(Կը շարունակուի)

ՔՐՈՆԻԿՈՆ

Կովկասեան կառավարչապետը, 'ի նկատի ունենալով Ղարսի նահանգից մահմեդականների դէպի Թիւրքիա գաղթելը և չկամենալով թոյլ տալ նրանց գաղթելու և այդպիսութեամբ ազատուելու զինուորագրութիւնից, հրամայեց նահանգապետին օրինական ամէն միջոցներով արգելք լինել մահմեդականների այդ ձգտումներին, յայտնելով այժմեանից և նահանգի բոլոր բնակիչներին, թէ այդ անձինք և ընտանիքներ, որոնք ինքնագլուխ կը գնան արտասահման, այլ ևս իրաւունք չունին նորից վերադառնալու ռուսական հողը և բնակուելու նրա սահմաններում. իսկ եթէ վերադառնան, օրէնքով կը պատժուին։ Բացի սրանից, ինչպէս հաղորդում է «Карсъ» լրագիրը, կառավարչապետը յանձնել է խստութեամբ հսկելու այն քրդերի վերադարձի վերայ, որոնք ինքնագլուխ գաղթել են դէպի Թիւրքիա։

—

ՇՈՒՇՈՒՑ Ա. Խ. մեզ գրում է.—Զնայելով, որ ամուսնութեան խնդիրը կեանքի ամենամեծ խորհուրդն է, բայց մեր քաղաքում կան շատ ծնողներ, որոնք կեանքի այս էական մասը դարձնում են իրենց կամքին խաղալիք և ո-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐ

(Վէպ երկու կեանքից)

Մասն առաջին. *)

III

Օգոստոսի վերջի օրերն էին։ Արեգակը սաստիկ տաքացնում էր փողոցների քարեայ սալայատակը, ծառերը կարծես թուլացած, վայր էին թողել իրենց արդէն դեղնած տերևները։ Ամբողջ Նոր-Նախիջևանը կարծես քնած լինէր մի խոր, մեռելային քնով. փողոցներում անց ու դարձ չկար. միայն շները, իրենց կարմիր լեզուները մի կանգուն թողած, աչքերը փակած, անփոյթ պառկած էին տների առաջ ստուերում. նրանք, որքան կարելի էր նկատել, անբաւական էին իրենց կեանքից, փողոցի հազուադէպ անցորդը անգամ չէր գրգռում նրանց չնային հետաքրքրութիւնը և նրանք գլուխները բարձրացնելով, դեռ աչքերը չբացած, մի քանի անգամ, ճիշդ պաշտօնապէս, անզօր հաչում էին և նորից քնում։ Աստուածածնի փողոցի ամենավերջում գտնվում էր կարապետ կօշկակարի տունը։ Դրսից դա բոլորովին չէր զանազանվում իւր հարևաններից. նոյնպէս փոքրիկ, երկու տուել ևս փոքրիկ լուսամուտներով, նա, կարելի է ասել, աւելի քանդուած էր աւելի կռացած. նրա ծեփած պատերը տեղ տեղ մերկացել էին. օջախը սևացել, ծռուել էր, յարդեայ տանիքը ծակուել, իսկ ներսից դա կրում էր կեղտոտութեան այն բոլոր նշանները, որոնք աչքի են ընկնում ամէն մի քիչ թէ շատ չքաւոր նախիջևանցու տանը. մի անկիւնում, 5 կամ 6 բաւականի կեղտոտ բարձեր, երկու վերմակ, մի հին կաղնեայ պահարան, մի հայելի, 4 կամ 6 աթոռ, մի քանի քուրսի—*), նստարաններ՝ իրենց մշտնջենական մնտարներով — ահա բոլոր երկու սենեակի կահ կարասիքը։ Կէս օր էր. կարապետը նոր էր կարել, վերջացրել մի զոյգ կօշիկ ու նստել սպասում էր կնոջ ճաշ բերելուն, վերջապէս մտաւ ներս և Շուշան խանումը—կարապետի կինը մի աման կաթնապուր ձեռին։

—Հա…բեր…տեսնեմ, դարձաւ նըրան կարապետը, առնելով իւր ձեռը հացի կտոր։ Ապուրը դրուեցաւ սեղանի վերայ։

—Կարապետ, չգիտես, վրաեղ գնաց աօր մեր մահլայի տիրացու Սարգիսը, չուրջաւը ձեռքին։

—Ե՞ր։

—Այպէս, սահաթը 10-ին։

—Հա… ախր աօր Մկրտիչ աղայի վաժատունը կօրհնին։

—Ի՞նչ կասիս, զարմացաւ Շուշանը։

—Զիգտէ՞ր…վանքէն վարդապետն ալ էկաւ

—Ի՛… ախր հէչ խապար չէինը, ափսոսաց կինը։

—Խապար ըլայինը, ինչ պիտ' անէիր, ժպտալով հարցրեց կարապետը։

—Վայ ինձ. կերթայի… կտեսնէի տա…

—Հապա՜…իսկը քուկուդ տեղդ է… ազաներ, բաներ հօն պիտ' լան, դուն էիր պակաս։

—Մի վախնալ, փախ չին տային. նըկատեց անբաւական ձայնով Շուշան խանումը,—վաժատունը խօ մեզի պէս խարիպներուն համար խորթած է։

Կարապետը ոչինչ չպատասխանեց. նա կամաց ծամում էր իւր բերնի հացի կտորը և կարծես մի հարցով զբաղուած լինէր. կնոջ վերջի խօսքերը մի միտք ծագեցրին նրա ուղեղում…

—Շուշան…ա՛…Շուշան, մի փոքր լռութիւնից յետոյ յանկարծ հարցրեց նա իւր կնոջը, դուն կասիս որ վաժատունը մեզի պէս խարիպներուն համար է. հա՞…անպէս չէ՞։

—Ի հարկէ…հապա որին համար է։

—Շատ աղէկ…եր որ անպէս էնը, մենք ալ իրաւունք ունինք Փայտա տեսնելու. անպէս չէ՞։

Շուշանը իսկոյն չհասկացաւ նրա հարցը։

—Ի՞նչ ասիր, հարցրեց նա։

—Կասիմ որ, վաժատունը խարիպի համար էնը, վրեմն մեր Սառային ալ կը կրնանք հօն սովրելու տալ։

—Հէպէթ.. զայիր տա… պատասխանեց մի քանի րոպէ մտածելուց յետոյ Շուշան խանումը։

—Ախր, Շուշան, միտք արա, մեզի ալ խօմ խօլայ կլար…ուսեալքը հալաւ, ոտքի բան…ալայը վաժատունէն է, նկատեց կարապետը։

—Հէպէթ…մեզի խօլայ կըլլար. ինքն ալ չարութիւն չէր անիր, կը սովրէր մարդ կըլլար։

—Էտև, ինչ կասիս, տանք Սառային վաժատուն։

—Ինչպէս ասիմ, նկատեց Շուշանը. էկէր չին ծեծիլ նէ՝ տանք, չէնէ, ես հալխին համար թապլած զաւակ չունիմ։

—Չէ…չէ…ինչու պիտի ծեծին, վճռողաբար յայտնեց կօշկակարը. ծեծի ո՞րն է…համա կընդունի՞ն մի…դուն ան նայէ։

—Ինչու չէ…մենք ալ խօմ փառք Աստուծոյ, էշխաններէն չինք։

—Ադ ադպէս է, խօսք չկայ. միայն միտք անել պէտք է, պատասխանեց կարապետը և խաչակնքելով երեսը, վերկացաւ սեղանից։

—Անինք տա միտք, միտքն ալ սատկով բան չէ խօմ..հօս նայէ, կարապետ, արի աս իրիկուան տիրացու Սարգիսին ձան տանք ու կալահի անինք, նկատեց Շուշանը, մտնելով սրահը, որ կարապետի ամառուայ գործարանն էր։

—Հա…ադ աղէկ ասիր, ուրախացաւ կօշկակարը. տիրացուն մեհատ խնդիրք ալ կգրէ…ժամուցը ինչ էնը կուտանք հէպէթ, պատասխանեց կարապետը և սկսեց իւր սովորական գործը։

Եւ իրաւ, յերեկոյեան ժամը 7-ին տիրացու Սարգիսը պատուով և փառքով բազմել էր կօշկակար կարապետի տանը և համարեա փիլիսոփայական անվրդովութեամբ թէյ էր անուշ անում. Տանտէրերը աշխատում էին որքան կարելի է լաւ յարգել թանկագին հիւրին և այդ թանկագին հիւրը շատ լաւ էր զգում, որ ինքը, Աստուածածնի եկեղեցու տիրացու Սարգիսը, անչափ վեր է այդ խեղճ, անզարգացած տանուտէրերից։ Գիշերուայ ժամը 10-ն էր, երբ տիրացու Սարգիսը աւարտեց խնդրքի գրելը։ Միւս օր այդ խնդիրքը կարապետը պիտի տանէր կակայեան ուսումնարանի տեսչին։ Վերջապէս տիրացու Սարգիսը իւր «ժամոցը» և հազար ու մէկ շնորհակալութիւններ և օրհնենքներ ստանալով, թողեց կօշկակար կարապետի տունը։

Իսկ այդ բոլորի սկզբնապատճառը փոքրիկ Սառան արդէն վաղուց անոյշ քնած էր իւր անկողնում և մանկական անմեղ չրթունքներով ժպտում էր երազում։

IV

Սեպտեմբերի 1-ն էր։ Արդէն երրորդ օրն էր, որ կակայեան հայ օրիորդաց ուսումնարանում սկսուել էին պարից յառաջանում են ընտանեկան փոթորիկներ ու անմեղ զոհեր։ Ահա այսպիսի դէպքեր յաճախ են կրկնվում, որի ապացուցութեան համար բաւական է մէջ ներել մի իրողութիւն։

---

*) Տես № 146.

*) Տեղական խօսքեր։

Գ. Զ.

Տեղացի ունեւոր մի պարոն իւր աղջիկը, սրանից հինգ տարի առաջ, նշանում է իւր գործակատարի վերայ։ Ըստ տեղական անաւեր սովորութեան, երկուստեք տեղի են ունենում հարուստ խնջոյքներ։ Բայց մի քանի տարուց յետոյ օրիորդի ծնողած և փեսայի մէջ ընկնում է սաստիկ ատելութիւն, և օրիորդի հայրն ու մայրը վերադարձնում են երիտասարդի նշանը։ Այս դէպքից անցնում է մի առ ժամանակ, օրիորդի ծնողները, զանազան պատուաւոր անձանց միջնորդութեամբ, գտնում են մի այլ արժանաւոր փեսայ, և նորից կատարվում է օրինաւոր նշանադրութիւն, որ տևում է մօտ վեց ամիս, դարձեալ տեղի են ունենում հարուստ խնջոյքներ և երկուստեք մսխում են մեծամեծ գումարներ։ Բայց օրիորդի ծնողաց բռնակալ ընթացքը նորից է երեան գալիս և այս երկրորդ փեսային էլ բաժանում են օրիորդից։ Վիրաւորուած փեսան մի օր յանկարծ հանդիպում է օրիորդի հօրը և այս վարմունքին բացատրութիւն պահանջում, որին սա պատասխանում է անվայել խօսքերով։ Սրտի դառնութեամբ և լի բուռն ցասմամբ, երիտասարդը վայր է գլորում նրան և սկսում է սարսափելի կռիւ երկու կողմից։ Այս մասին արդէն քննութիւններ է սկսուած դատարանում և դեռ գործի ելքը անյայտ է։ Գործը դեռ մի որոշ ընթացք չըստացած, օրիորդի ծնողները մօտ ժամանակներումս իրենց աղջկանը նշանում են մի օտար երիտասարդի հետ, բայց սա ես ծանօթանալով օրիորդի ծնողաց վարք ու բարքին, և իմանալով, որ օրիորդը քանիցս նշանուել է և երկրորդ նշանադրութեան հարցը դեռ չէ վերջացել, կամենում է թողնել ու հեռանալ։ Սոյնանման դէպքերի վերայ հրաւիրում ենք հոգևոր իշխանութեան ուշադրութիւնը, որ կարող է այսպիսի չարիքների յաճախուելուն մասամբ արգելք լինել։

—

Սեպտեմբերի 3-ին չորեքշաբթի գիշերը Բագու տանող գնացքով ճանապարհ ընկաւ պարսից Լօնդօնի և Բերլինի դեսպան հայազգի Նազըմթ-դօվլէ (տերութեան բարեկարգիչ) Մելքօն-խանը։ Նա մտադիր է ցամաքով Ռաշտ գնալու, որպէս զի այնտեղից շարունակէ իւր ճանապարհը դէպի Թէհրան։ Մելքօն-խանը մնալու է Թէհրանում տասն օր և յետոյ վերադառնալու Թիֆլիս իւր պաշտօնատեղին Լօնդօն գնալու համար։

—

Ահա երկու օր է, որ համարեա թէ անընդհատ անձրևում է քաղաքումս և նրա շրջակայքում։

—

ԵԼԻՍԱՒԵԴԱՊՕԼԻՑ․ — Գանձակի երկսեռ դպրոցների նոր ընտիր հոգաբարձութեան մէջ տարաձայնութիւն կայ ու շատերն էլ ներկայ չեն գտնվում հոգաբարձական ժողովներին։ Հաստատ աղբիւրներից իմանում ենք, որ այդ բոլորի պատճառը այն է, որ հակառակ հոգաբարձուների կամաց ցանկանում են ուսուցիչ նշանակել։ Շատ ցաւալի է, որ դեռ գործի սկզբում «խնամի ջանն» պեր է խաղում։

—

Վերջին վիճակագրական տեղեկութիւններից, ինչպէս հաղորդում է «Рус. Кур.» լրագիրը, իմացվում է, որ Ռուսիայում ռուսադաւաններից մեռնողների թիւը բաւականին շատ է։ 60 միլիօն ռուսադաւաններից համարեա թէ ամեն տարի ծնվում են 3,618,703 հոգի (երեխաները 264 հազարով աւելի են ծնվում), այսինքն մօտ 6°/o։ Միևնոյն ժամանակում մեռել են 2,735,545 հոգի (արական սեռը 60 հազարով աւելի է), ուրեմն 4°/o։ Ամենից շատ մեռնում են մինչև 5 տարեկան երեխաները։ Այնպէս որ մի տարում մեռան 1,666,378 երեխաներ, այսինքն բոլոր մեռնողների մէջ երեխաները կազմում են 70°/o։ Շատ են մեռնում նաև 5-ից մինչև 10 տարեկան երեխաները, որոնցից մահը յափշտակում է տարեկան մօտ 170 հազար հոգի։ Հասակաւորներից քիչ են մեռնում, բայց սկսած 40 տարեկանից նորից շատանում է մեռնողների թիւը։ 20—65 տարեկան հասակում տարեկան մեռնում են մօտ 80 հազար հոգի։ Մինչև 75—80 տարին ապրում են — 42,612 հոգի, մինչև 80—85 տարին — 23,443 հոգի, այդ էլ քիչ է պատահում, այն է 10,207 հոգի, իսկ 90—95 տարեկան ծերունիներ և պառաւ կանայք ընդ ամենը 5 հազար հոգու են հասնում։ 95—100 տարի ապրողների թիւը 2,198 է։ 100-ից աւելի հասակ ունեցել են ամբողջ Ռուսիայում 419 հոգի։ 130 տարի ապրեց միայն Պետերբուրգի նահանգում մի կին։

ԴՋԼԱՐԻՑ․—պ. Գ. Մկրտ. դիմելով մեզ խնդրում է հրատարակել հետևեալը. «Ձեր պատուական «Նոր-Դար»-ի № 135-ում Դջլարից մի լուր էր տըպուած, իբրև թէ «հոգաբարձուները ընտրուած են և ուսուցչական խումբը համարեա կազմակերպուած է։ Շատերի անհիմն կարծիքը փարատելու համար, յայտնում եմ, որ ես չեմ այդ լուրի հեղինակը։ Այդ լուրը հաղորդողը երևի կամեցել է դրսից պաշտօն ցանկացող ուսուցիչների ճանապարհը կըտրել»։

—

Կան մարդիկ, որոնք դժուարութեամբ են կարգ սովորում, կարգի ընտելանում, դրանով թէ իրենց գործն են դժուարացնում և թէ ուրիշներին իզուր տեղը նեղութիւն պատճառում։ Շատերից մի երկու օրինակ. «Նոր-Դարի»-ի մէջ հրատարակվում են չորրորդ երեսում յայտարարութիւններ, ոմանք այդ յայտարարութիւնները կարդացողներից կարծում են, որ յայտարարութիւններ տուողները խմբագրատան մէջ նստած՝ հարցնողի են սպասում և թէ թերթի խմբագրութիւնը պարտաւոր է անգիր իմանալ ինչ յայտարարութիւններ են տպուել և ո՞ր համարներում և այլն և այլն։ Տպուած է օրինակ պ. Ս. Մանուէլեանցի առևտրական կուրսերի յայտարարութիւնը և նրա մէջ գրուած է և ուրիշ մանրամասնութիւնների հետ և պ. Ս. Մանուէլեանցի հասցէն. փոխանակ իրեն Ս. Մանուէլեանցին դիմելու, խմբագրութեան են դիմում, որ սա էլ Մանուէլեանցին դիմէ կամ իրենց ուղարկած նամակը նրան հասցնէ կամ նրանից կուրսերի ծրագիրը խմբագրութիւնս վերցնէ և իրենց ուղարկէ։ Այնպէսներ էլ կան, որոնք փոխանակ գրելու գոնէ այսպէս «Նոր-Դար»-ի այսինչ համարում տպուած է այսինչ բովանդակութեամբ յայտարարութիւն, խնդրեմ և այլն» գրում են, «ձեր թերթի մի համարում մի ինչ որ կուրսերի մասին յայտարարութիւն կար, խնդրում եմ այդ մասին և այլն»—գնա ու էշը ցեխից հանիր, ինչպէս իմանանք, թէ ինչ յայտարարութիւն է և ո՞ր համարում։ Երևի կարծում են, որ խմբագրութիւնը պէտք է համարները № 1-ից սկսած թերթէ և մարգարէանալով գտնէ այն յայտարարութիւնը, որը կամենում են։

Ահա մտնում է մի պարոն խմբագրատուն և խնդրում է երկարաբանութիւններով, որ իրեն ցոյց տան այն համարը, որի մէջ գուցէ տպուած մի իրեն հետաքրքրող լուր՝ գաւառական այս ինչ քաղաքից։ Նրան հարցնում են։

—Պարո՛ն, եթէ դուք «Նոր-Դար»-ի մի որևէ համարն էք ուզում, կարող էք այն խանութներում, որտեղ համարները ծախվում են 5 կոպ. տալ և առնել, մեր պարտականութիւնը խօ չէ…

—Ո՛չ, ո՛չ, համար չեմ ուզում առնել, այլ միայն այնպէս, մի լուրի համար տեսնել եմ ուզում։

—Հը՞մ, չէք ուզում առնել «Նոր-Դար»-ը և մեր ժամանակը խլում էք, համբերութիւնից հատած պատասխանում են նրան, գոնէ ասացէք, պարո՛ն, ո՞ր համարն էք ուզում։

—Համարը չգիտեմ, համարը չեմ ուզում, այլ միայն տեսնել. եթէ կարելի է՝ պտրտեցէք, երևի մի համարում կը լինի իմ ուզած լուրս, լինում է պատասխանը։

Զարմանալի պարտաւորութիւններ ունի հայոց ամենօրեայ թերթի խմբագրութիւնը, երևի այդ նրանից է, որ նրա շատ ապառիկները մնում են անվճար և պատուական մարդիկ շատ դժուարանում են ամբողջ տարուայ ընթացքում 10 րուբլի բաժանորդագինը վճարել։

Միայն մեր երկրի հայերը չեն, որ հայոց խմբագրութեան վերայ շատ տարօրինակ պարտաւորութիւններ են դնում, մեր թրքահայ եղբայրները այդ կողմից յետ չեն մնում։ Ահա մի օրինակ։

«Տէր

Յաճախ կարդացեր եմ Ձեր ազգօգուտ լրագրոյ էջերուն մէջ վաճառականական ազդեր և ծանօթութիւններ, որոնք անաւասիկ գլուխ թելադրեցին ձեր յարգոյ խմբագրութեան դիմել, որպէս զի Տպիսցի և այլ տեղացի կաղնի գործ ընող վաճառականաց հետ տեսակցելով, մեր վաճառատուն նոցա ծանօթացնէք. մեր վաճառատուն որ հաստատուած է Կիրասոն «Կիւրեղ Պարոն-Վարդեան և որդիք» անուամբ, կզպաղի ընդհանրապէս կաղինի գործակատարութեամբ. մեր վաճառատուն միշտ գործ կընէ Թայղանի և Օդեսայի վաճառականաց հետ, որոնք գոհ մնացած են. ուստի կը խնդրեմ, որ մեզ գտնէք պատուաւոր վաճառական՝ որոյ վաճառած կաղիններն ուղղակի Կիրասոնէն նոցա ղրկենք 2 °/o գոմիսիօնով. աւելի լաւ կը լինի, եթէ մեզ հետ ուղղակի բանակցելով՝ մեր վաճառատան պայմանաց ծանօթանան։

Ընդունեցէք մեր յարգանքներ…

Քոյդ
Յարութիւն Կ. Պարոն-Վարդեանց
Կ. Պօլիս Շարգ-Չարշիսի №—45»

Ընթերցողը «քոյդ» բառը կարդալով կարող է կարծել, թէ ո՛վ գիտէ, ինչպիսի մօտիկ և սրտակից բարեկամ է թերթիս խմբագրի հետ պ. Յ. Կ. Պարոն-Վարդեանը, մինչդեռ առաջին անգամն է, որ խմբագրութիւնս պատիւ ունի այդ անունը լսելու։ Բանից երևում է, որ մեր խմբագրութիւնը կաղին ծախող և գնողների համար «գոմիսիօներ» մօտ կոմիսիօներութիւն պէտք է անէ—ազգասիրաբար։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇՈՒԼԱՎԵՐ, 28 օգոստոսի։ Ներկայ ամսի 24-ին, Շուլավէրի գործակալ քահանան ներկայութեամբ աչքի ընկնող անձանց՝ կարդաց հոգևոր կառավարութիւնից ուղարկած հրահանգները և հրաւիրեց ընտրել հոգաբարձուներ։ Հրահանգների մէջ յիշուած «որոնել աղբիւրներ ուսումնարանների համար» խօսքերը շատերին խրտնեցրին և այդ մասին եղան երկար ու ձիգ խօսակցութիւններ, որոնք ոչ մի վերջաւորութեան չը յանգեցին։ Շուլավէրցիները, որ այս տարի մօտաւորապէս 25 հազար րուբլի պիտի ծախսեն ներ-

---

բաղմունքները։ Երկար ու լայն սրահով ստէպ ստէպ անցնում էին դաստիարակուհիները, ուսուցիչները և ուսումնարանի սանիկները. վերջինները հագուած էին միակերպ.—մութ դեղնագոյն չոր և կապոյտ գլխի ծածկոց. նրանք դեռ չէին ընտելացած այդ ահագին դահլիճներին, դասարաններին, ննջարաններին և կարծես մոլորուած վազվզում էին սենեակից սենեակ։

Այդ օրը ժամը 10-ին առաւօտեան, ուսումնարանի վարչութեան ընդունարանը մտաւ կօշկակար Կարապետը։ Նա բռնել էր Սառայի ձեռքից։ Նա եկել էր իմանալու, ընդունուած է իւր զաւակը, թէ ոչ։

Վախով մտաւ նա այդ մեծ, գեղեցիկ զարդարած սենեակը, և խոնարհ գլուխ տուեց։ Սառան իւր կեանքումը չէր տեսած այդպէս սենեակ և ուշադրութեամբ և մի և նոյն ժամանակ վախով սկսեց զննել այդ բոլոր, իրեն անծանօթ, առարկաները։ Պատից կախուած էր հիմնադրի մեծ լուսանկար պատկերը. լուսամուտներից վայր էին իջնում գեղեցիկ նուրբ դաշխայ վարագոյրներ։

—Այդպէս գեղեցիկ վարագոյրներ մեր փողոցում ոչ ոք չունի, մտածեց Սառան։

Պատերի մօտ դրած էին փափուկ բազկաթոռներ և մի բազմոց, սենեկի անկիւնում գտնվում էր մի բոլորովին նոր դաշնամուր, այդ վերջինը բոլորովին զարմացրեց փոքրիկ Սառային։

—Այդ ինչ է…աշխատում էր նա իւր փոքրիկ ուղեղով վճռել իրեն հետաքրքրող հարցը, բայց չէր կարողանում, նա արդէն կամենում էր բացատրութիւն խնդրել հօրից, երբ տեսուչի անախորժ ձայնը ուշքի բերեց նրան.

—Հա…դուք եկաք, դարձաւ տեսուչը մի կարճահասակ մարդ, կարապետին…խոկոյն…ահա…ձեր աղջիկը ընդունուած է գիշերօթիկ և ձրիապէս…այսինքն առանց ստակի…

—Շատ շնորհակալ ենք, աղա, Աստուած օրերդ երկարացնէ, օրհնում էր կօշկակարը տեսչին. վերջինը պաշտօնապէս զննում էր Սառային։

—Ոչինչ…ոչինչ, շտապեց նկատել ծիծաղելի շարժուածքներով տեսուչը՝ —ուրեմն այժմս կարող էք թողնել ձեր զաւակը այստեղ, ուսումնարանում։

Կարապետը կարծես առաջուց չէր մտածել, որ ինքը պիտի բաժանուի իւր երեխայից. և երբ նա լսեց տեսչի վերջի խօսքերը, նրա սրտում մի բան կարծես կտրուեց, սաստիկ ցաւեց, նա նայեցաւ Սառային և շատ տխրեց։ Նա մի քիչ կանգնեց, ջերմ համբուրեց Սառայի երկու թշերից, խաչակնքեց նրան և…խեղճի խոշոր, այրող արտասուքի երկու կաթիլները թրջեցին երեխայի երեսը…

Վերջապէս նա սրբելով ձեռում իւր գլխարկը, մօտեցաւ տեսչին և անզօր, դողդոջուն ձայնով հարցրեց.

—Աղա…աճար կլյա՞ մէ մէկ տանեն զաւակիս տեսութիւնի գալ։

Եւ նա կրկին նայեց Սառայի վերայ։ Վերջինս լուռ, լացած աչքերով կանգնած էր սենեկի անկիւնում և վախով նայում էր տեսչի նշանագգեստին։

—Այո…այո կարելի է, պաշտօնապէս պատասխանեց տեսուչը և Սառայի ձեռը բռնած դուրս եկաւ սենեկից։

Կօշկակարը մի քիչ էլ կանգնեց ուսումնարանի ընդունարանում, նայեց հիմնադրի պատկերի երեսին, խաչակնքեց իւր երեսը և դանդաղ, անհաստատ քայլերով թողեց սենեակը։ Այդ օրուայ ժամը 3-ին Սառայի ազգանունը գըրուեցաւ վարժատան ցուցակում և Աստուածածնի փողոցի փոքրիկ Սառան, Կարապետ կօշկակարի աղջիկը, դարձաւ այդ օրից «աշակերտուհի պատրաստական դասարանի Կակայեան հայ օրիորդաց ուսումնարանի»։

V.

Օրերը գնում էին. հասաւ վերջապէս և ձմեռը, խոր, մեռելային քնով քնեց բնութիւնը։ Այդ միջոցում Կակայեան ուսումնարանում պարապմունքները գնում էին իրենց սովորական կարգով։ Նոյնպէս ամեն օր գալիս էին ուսուցիչները, նոյնպէս ամեն գիշեր հսկում էին ննջարանում վերակացու օրիորդները. նոյնպէս ամեն կիւրակի եկեղեցի էին տանում զոյգ զոյգ Մաթոսների, Սարգսների աղջիկներին քաղաքավարի և հարուստ ազգերի աղջիկների հետ…Միայն մէկ փոփոխութիւն էր նկատվում այդ փոքրիկ սահմանափակ աշխարհում։ Ուսումնարանի սանիկները արդէն ընտելացել էին իրենց նոր կեանքին, նրանք շատ ազատ էին զգում իրենց…փակ, գիշերօթիկների համար շինուած ուսումնարանը արդէն սկսել էր դնել իւր կնիքը մեծ և փոքրիկ սանիկների վերայ։ Սառան նոյնպէս այդ 4 կամ 5 ամսուայ միջոցի ընտելացաւ ուսումնարանի փակ կեանքին։ Նա թէպէտ սկզբից շատ տխուր էր, ստէպ ստէպ մտաբերում էր իրենց տունը Աստուածածնի փողոցում, իրեն մօրը, հօրը, իրեն հասակակից Սանդուխտին, Մարիամին, Միքայէլին, մտաբերում էր իրենց ամենօրեայ խաղերը, վէճերը, լացը, յետոյ կրկին զուարթ և անհոգ խաղերը, մտաբերում էր այդ բոլորը և բնականապէս հեռանում էր, գոնէ աշխատում էր հեռանալ, քաշուել այժմուայ իրեն շրջապատող կեանքից։ Այդպիսի րոպէներում Սառան շատ անուշադիր էր դասերի ժամանակ, անտեղի պատասխանում էր ուսուցչի հարցերին և յետոյ, երբ դասերը վերջանում էին, քաշուելով ահագին դահլիճի մութ անկիւններից մէկը, սկսում էր տխրել և վերջապէս լալիս էր. բայց նա աշխատում էր ծածկել իւր արտասուքը. նա խեղդում էր իւր հեկեկանքները, որովհետև ուսումնարանում բոլորից էլ լսած էր, որ լալը ամօթ է, որ լալիս են միայն փողոցի վատ, անկիրթ աղջիկները…Նրա ընկերուհիները այդ միջոցին խաղեր էին հնարում, կանչում էին և Սառային, սկսում էին որոնել և վերջապէս գտնելով խընդրում էին, որ մասնակցի։

—Գնանք, Սառա, խաղ անենք, քաշում էին նրան ընկերուհիները։

—Չեմ ուզում, վճռողաբար պատասխանում էր Սառան և աւելի յետ քաշվում։

—Ինչի, կտեսնես, որքան ուրախ կլինի, աշխատում էին համոզել ընկերուհիներից մի քանիսը։

—Չեմ ուզում, կրկնում էր Սառան և նրա սև, խոշոր աչքերը սկսում էին փայլել։

—Է՛, է, թողէք դրան, նա միայն լալ է իմանում, մէջ էր մտնում նրա ընկերուհիներից մէկը, որ իւր անվախ չարութիւնների և յանդուգն բնաւորութեան շնորհիւ միշտ իշխում էր իւր հասակակիցների վերայ։

—Լաւ…թողէք ինձ ասում էր Սառան և փախչում էր մի ուրիշ սենեակ։ Այդպիսի րոպէներին նա սիրում էր միայնակութիւնը, նա ժամերով նըստած մի տեղում մտածում էր, աշխատում էր իւր փոքրիկ ուղեղով ըմբռնել, քննել իւր նոր կեանքի առօրեայ երևոյթները, աշխատում էր համեմատել այդ նոր կեանքը իւր հին, անցած կեանքի հետ։ Այդ ժամանակ նա քին և թէ արտաքին պահանջների համար, տրտունջ բարձրացրին ուսումնարանի ծախքերի համար։ Նրանք փոխանակ ուրախանալու, որ վերջապէս իրենց փակ ուսումնարանի դըռները պիտի բացուէին՝ աննպատակ խօսակցութիւնների դուռն բացին և ընտրութիւնը առկախ մնաց։

Որովհետև հասարակութիւնից շատերը տրտնջում էին իրենց նուիրաբերածները կորչելու մասին, լաւ կը լինէր, որ մանրամասնաբար հաշիւներ կայացնէին, որպէս զի գլխակցաբար ձեռնամուխ լինէին ընտրութեան։ Չը պէտք է յուսահատուել շուլավէրցիների այդ օրինակ վարուելուց, նրանք երբէք առանց «դաւի-դարաբի» մի գործ չեն կարողանում կատարել։ Օգոստոսի 31-ին պէտք է լինի վերջնական ընտրութիւն. առաջին անգամ շատ քիչ ժողովուրդ էր հաւաքուած, նրա համար, որ առանց վաղօրօք յայտարարութեան տանուտէրը շուկայից հաւաքեց մի քանի մարդկանց և տարաւ արաւ «մի տեղ»։ Յոյս կայ որ հասարակութիւնը ուշաբերուած կը լինի այդ ընտրութեան ժամանակ։

Նոր հաստատուած կանոններին համաձայն, հոգաբարձուներ պիտի լինին գործակալը, երեցփոխանը և մէկն էլ ժողովրդից ընտրուած։ Շուլավէր երկու եկեղեցի կայ. ուրեմն և երկու երեցփոխ՝ պպ. Ա. Մեհրաբեան և Մ. Մորութեան. առաջինը մեր կարծիքով առաւել յարմարաւոր է, որովհետև գործունեայ է և որ գլխաւորն է՝ գրագէտ է. մնում է մէկը, այն էլ հին հոգաբարձու պ. Սար. Տէր-Սարգսեանը կը լինի. ուրիշ յարմարաւորը մեր մէջ չկայ։

Պէտք է ասած, որ մեր գիւղացիները զուր ծախքերից շատ վախենում են, միւս կողմից էլ, Ղօմուրադ եկեղեցիի ուխտը ծածկելու, աղբիւրները գիւղը բերելու հոգսն է մեզ նեղացնում։ Մեր տանուտէրը բեզարել է շատ սրա-նրա խօսից ընկնելուց, ինքն էլ մի քիչ անկարող մարդ է երևում. ցանկալի կը լինէր, որ նա եռանդոտ գործակիցներ ունենար։ Մեզանում այժմ տանուտէրութիւնը դժուարացել է, վաղուցուայ նման չէ։

Գ. Տ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ. «Presse» լրագրի Սօֆիայի թղթակիցը Կլիմենտ մետրոպօլտի կալանաւորութեան մասին հաղորդում է հետևեալ հանգամանօրէն տեղեկութիւնը. «Միտրոպօլիտը զբօսանքից նորէր վերադարձել, որ մի սպայի հրամանատարութեան ներքոյ նրա տունը շրջապատեցին 10 հեծելազօրներ։ Երբ սպան երեք զինուորով ներս մտաւ առաջնորդարանի սենեակը, առաջին անձը, որին նրանք հանդիպեցին, նոյն ինքը Կլիմենտ միտրօպօլիտն էր։ Վերջինս բաւականին կոպտութեամբ հարցրեց սպայից, թէ ինչ է կամենում։ Սպան հանդարտութեամբ պատասխանեց, թէ իրեն հրամայել են կալանաւորել նրան։ Այն ժամանակ միտրօպօլիտը բռնելով իւր լանջական խաչը, գոռաց զինուորներին. «Միթէ Տէրունական խաչը ինձ չի փրկիլ բռնութիւնից»։ Բայց զինուորները այս կրօնական խօսքերի վերայ ուշադրութիւն չդարձրին, բռնեցին միտրօպօլտի կուռը և կամեցան բռնութեամբ տանել նրան։ Այդ ժամանակ միտրօպօլիտը փոխեց խօսակցութեան ձևը և խնդրեց սպայից նրան ոտքով չտանել։ Զիջանելով այս խնդրին, սպան կառք վարձեց և նըստեցնելով նրա մէջ միտրօպօլիտին, 10 հեծելազօրներով՝ դիմեց դէպի ոստիկանատուն։

—«Н. Вр.» լրագրին հաղորդում են, թէ Բատտենբերգեան պրինցը սպաներին հրաժեշտ տալու ժամանակ ասաց. «Եթէ ազգային մեծ ժողովը արժան համարէ ինձ նորից ընտրել— ես կը վերադառնամ ձեզ մօտ»։

ՖՐԱՆՍԻԱ. «Temps» լրագիրը Բէլֆօրում գերմանական լրտեսի ձերբակալութեան մասին պատերազմական մինիստր գեներալ Վօլֆի կողմից արած առաջարկութիւնից տեղեկութիւն քաղելով հաղորդում է հետևեալը։ Կալանաւորուած գերմանական սպան դուրս եկաւ իսկական ծառայութիւնից 1871 թ. գնդապետի աստիճանով։ Նրա մօտ գտած վկայաթղթերը պարզապէս ցոյց տուին նրա ով լինելը։ Նա հագած ունէր ճանապարհորդի հագուստ։ Բերդ տանող ճանապարհում նա իւր կասկածաւոր դէմքովը և վարմունքովը դարձրեց իւր վերայ մի առանձին ուշադրութիւն։ Այն ժամանակ, երբ նա, բերդի դռներից 500 մետր հեռաւորութեան վերայ սկսեց հարցնել, թէ չկա՞ն արդեօք մօտակայ տեղերում պանդոկ կամ գինետուն, որ կարելի լինի իջևանել, իսկոյն այդ մասին յայտնեցին բերդի հրամանատար գեներալ Կէյզերին։ Վերջինս իսկոյն հեռագրեց գեներալ Վօլֆին, խնդրելով հրահանգ։ Կալանաւորած գնդապետի մօտ բացի իւր անձնական վկայաթղթերից, ոչ մի կարծիքաւոր թղթեր չգտան։ Նա յայտնեց, թէ ճանապարհորդում է Վօգեզեան լեռներում, ինչպէս մի հասարակ ճանապարհորդ, որ հիանայ և զմայլի այդ լեռների սքանչելի ու գեղարուեստական տեղերովը։ Գեներալ Վօլֆը կասկածանքի պատճառ չգտնելով և արդարացի համարելով նրան, հրամայեց ազատ թողնել։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կենդանի թաղած երեխայ։ «Petit Marseillaise» լրագրին Սիստերենից գրում են հետևեալը. Ժ.. ոմն սրանից մի քանի տարի առաջ գաղթեց Ամերիկայ, թողնելով իւր հայրենիքում Ժիգոր գիւղում (Ներքին Ալպերում) իւր Վիրգինիա կնոջը և մի փոքր որդին, որը այժմ 6 տարեկան է։ Յիշեալ պարոնի կինը արձակ կեանք էր վարում և զաւակ ունեցաւ, որի ծնունդը նա ամենից ծածկում էր, իսկ յետոյ կենդանի թաղեց երեխային։ Նրա մեծ որդին տեսաւ այդ սոսկալի յանցանքը։ Չնայելով, որ երեխան արդէն 14 ժամ գտնվում էր հողի մէջ, սակայն նա դեռ ևս շնչում էր և մեռաւ միայն հողից հանելուց 7 ժամ յետոյ։ Յանցաւորը կալանաւորուած է։

⁂

Բերլինի անդամահատութեան մաղէի բժիշկ Վիկերսհէյմերը ամեն տեսակ մսեղէն թարմ պահելու համար, մի անվնաս հեղուկ է հնարել։ Այդ հեղուկը ոչ համ ունի ոչ էլ հոտ և թարմ է պահում, ինչպէս հում, նոյնպէս եփած միսը։ Դրա համար հարկաւոր է միայն այդ հեղուկով յագեցրած սպունգով թրջել միսը, որ օդի ազդեցութեան ենթարկուած բոլոր մասերը ծածկուած լինին հեղուկով և այդպէսով կարելի է պահել միսը փչանալուց և հոտելուց։ Եթէ այդ հեղուկից փոքր ինչ խառնենք կաթի հետ, այն ժամանակ կաթը կարող է անվնաս մնալ մինչև 8 օր։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

2 Սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. «Օրէնքների ժողովածուի» մէջ տպուած է քաղաքի բօրսայի հիմնարկութեան կարգադրութիւնը։

ՎԻՍՕԿՕ-ԼԻՏՕՎՍԿ. (Прав. Вѣст.» թղթակցութիւն։) Երէկ առաւօտեան 9 ժամին Նորին Կայսերական Մեծութիւնները Թագաժառանգի և մեծ իշխաններ Գէորգ և Վլադիմիր Ալէքսանդրովիչների նաև սվիտայի անձանց հետ, գնացին զօրախաղում մասնակցող զօրքը տեսնելու։ Զօրահանդէսից յետոյ, կէս օրուայ ժամի 3-ին, Նորին Մեծութիւնները և Բարձրութիւնները, ուղիղ գնացին երկաթուղու կայարանը, որտեղից Նորին Մեծութիւնները բարեհաճեցին գնալ Լիւբօխինսկ, ուր մի քանի օր կը բարեհաճեն որսով պարապել։ Նոյին Մեծութիւնների հետ գնացին մեծ իշխաններ Վլադիմիր Ալէքսանդրովիչը և Նիկօլայ Նիկօլաեվիչ կրտսերը, Կայսերական արքունիքի մինիստրը, Կայսրուհու ֆրէյլիններ գրաֆուհիներ Գօլենիշչեվա-Կուտուզօվաները, գերմանական կայսեր գեներալ ադիւտանտ Վերդերը, Կայսերական պալատի գլխաւոր սենեկապետ Րիխտերը, գեներալ ադիւտանտ Չերեվինը, Կայսերական որսի կառավարիչ իշխան Բարեատինսկին, Ֆլիգել-ադիւտանտներ Օբօլենսկի և Շերեմետիեվ իշխանները, անձնական-վեբըժիշկ Գիրշը և ակադեմիկոս Զիչը։ Երէկ, կէս օրուայ ժամի 4-ին Թագաժառանգը իւր եղբայր մեծ իշխան Գէորգ Ալէքսանդրովիչի հետ գնաց դէպի Պետերհօֆ։ Նորին Բարձրութիւններին ուղեկցում է գեներալ ադիւտանտ Դանիլօվիչը։ Նոյն գնացքով դուրս գնացին մեծ իշխան Նիկօլայ Նիկօլաեվիչ աւագը. Օլդէնբուրգեան պրինցը, նոյնպէս և Վաննօվսկի և Գիրս մինիստրները։

ԶԱԴՕՆՍԿ. Երէկ հասաւ այստեղ «Надежда» շոգենաւը, բերելով իւր հետ բուկսիր նաւով քարածուխով լի մի բարժա, որը կը գնայ մինչև Ելեց, Կալաչից նոր ճանապար բանալով Դօնի վերայ։

ՍՕՖԻԱ. Այստեղի ռուսական հիւպատոսութեան կառավարիչ Բօգդանօվը գնաց Պետերբուրգ։

ԼՕՆԴՕՆ. Արդարադատութեան մինիստրի ընկերը պատգամաւորների ժողովին յայտնեց, թէ Բօլղարիայում սահմանած խնամակալութիւնը համաձանվում է սահմանադրական կարգերի հետ, որոնք համապատասխան են գործերի ներկայ դրութեանը և թէ ինչպէս երևում է, բօլղարական քաղաքական բոլոր կուսակցութիւնները վճռել են օգնել խաղաղութիւն պահպանել։

Անգլիական սահմանաչափ կօմմիսիայի անգլիական անդամները վաղը գնում են Հնդկաստան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Վեննայի նախկին զինուորական գործակալ գեներալ Կաուլբարսը Սօֆիայում դիպլօմատիկական գործակալ է նշանակուած, ուր և գնաց։

4 Սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Երէկ զօրախաղից վերադարձան Թագաւոր ժառանգը, արտաքին գործերի և պատերազմական մինիստրները։

կարծես քարանում էր, պապանձում... ոչ մի խօսք չէր կարելի հանել նրա բերանից, ոչ քի առաջ չէր մերկացնում իւր մանկական սիրտը, ոչ ոքին չէր դիմում խոստովանութեան... Միայն մինը կար ամբողջ ուսումնարանում, որին սիրում էր Սառան. այդ վերակացու օրիորդ Հեղինէ Զատիկեանն էր։ Առաջի օրից Սառան կարծես մի պաշտպան գտաւ օրիորդ Հեղինէի մէջ, և իրաւ որ, օր. Հեղինէն այնպէս ընկերաբար վարուեց Սառայի հետ, այնպէս զգուշութեամբ թափանցեց նրա հոգեկան, ներքին աշխարհը, այնպիսի վարպետութեամբ տիրեց նրա մանկական սրտին, որ Սառան իսկոյն, առաջի օրից սիրեց նրան, սիրեց իւր փոքրիկ զգայուն սրտի բոլոր զգացմունքներով։ Օր. Հեղինէն ինչ որ ասում էր, դա Սառայի համար արդէն օրէնքի սրբութիւն էր ստանում։ Եթէ նրա ընկերուհիները մի բան էին մտածում անել, մի չարութիւն, Սառան նախ համաձայնվում էր, իսկ յետոյ, մտաբերելով օր. Հեղինէի դէմքը, նրա բարի, բայց միշտ լուրջ երեսի գծագրութիւնը, թողնում էր անկատար իւր միտքը և ինքը մի քանի ժամանակից յետոյ գնում, պատմում էր օր. Զատիկեանին իւր մեղքը, զղջում էր և ներողութիւն խնդրում։

—Ոչինչ... ոչինչ, և աշխատում էր հանգստացնել վրդովուած երեխային օր. Զատիկեանը, ոչինչ... միայն ուրիշ անգամ չանես...։ Սառա, այդ լաւ չէ, դու ինքդ էլ ես հասկանում, այնպէս չէ։ Եւ Սառան փաթաթուելով նրա վզին խոստանում էր լաւ պահել իրեն։ Օր. Հեղինէի Սառայի վերայ ունեցած ազդեցութեան գաղտնիքներից մէկն էլ այն էր, որ նա ոչ մի անգամ չէր աշխատում համոզել Սառային միայն լոկ խօսքերով, միայն իւր պաշտօնական ոյժով... ընդհակառակը, եթէ նա կամենում էր մի բան հասկացնել երեխային, մի նոր միտք ծագեցնել նրա ուղեղում, նա առաջ էր բերում հազար ու մի փաստեր, օրինակներ, համեմատութիւններ և միշտ հարցնում էր երեխայի ինքնուրոյն կարծիքը այս կամ այն հարցի, այս կամ այն երևոյթի մասին։ Օր. Զատիկեանը միշտ ընկերաբար էր վարվում Սառայի հետ, հասկացնում էր նրան, որ նա իրենից ցած չէ... ընդհակառակը, ամեն պատշաճ րոպէներին նա ցոյց էր տալիս, որ նրանք կարծես թէ հասակակից են, և Սառան նրա ընկերուհին է և ոչ թէ ստորադրեալը։ Օր. Զատիկեանի այս վարմունքն էր, որ գրաւեց Սառայի ջերմ սէրը։ Նա տեսնում էր, որ ուրիշները այդպէս չեն, ուրիշները կարծես անչափ, անհաւասար բարձր են իրենից։

Սառան աշխատում էր որքան կարելի է հեռանալ, չհանդիպել նրանց...։

Իւր դասընկերուհիների հետ Սառան չէր վարվում հաւասար պէս. հարուստ աղաների աղջիկներից նա միշտ քաշվում էր, միշտ հեռանում և ամեն յարմար րոպէներին աշխատում էր վիրաւորել նրանց փոքրիկ ազնւական ինքնասիրութիւնը։ Երբ պատահում էր, որ հարուստ աղայի աղջիկը չէր իմանում իւր դասը և պատժվում էր վարժապետից, Սառան առաջինը ըսկսում էր նրան մխիթարել, բայց այդ մխիթարութեան խօսքերի մէջ երևան էր գալիս կծու ծիծաղը, ուրիշի անբաղդութիւնից ուրախ լինելը։ Կամ երբ խաղի ժամանակ աղայի աղջիկը չէր կարող ցոյց տալ այնքան ֆիզիքական ոյժ, ճարպիկութիւն, Սառան ամենից առաջ սկսում էր սովորեցնել նրան։ Նա ցոյց էր տալիս, ինչպէս պէտք է վարուել այդ դէպքում և այդ բոլորը միայն նրա համար, որ կարողանայ ցոյց տալ իւր սեպհական ոյժը, իւր ճարպկութիւնը և դրանով ստորացնէ հարուստ աղջկան...Սառայի այդ վարմունքը ինքնուրոյն բնաւորութեան հետևանք չէր. Կարապետ կօշկակարի աղջկայ սրտին անծանօթ էր այդ չար նախանձը. երբ պատահում էր որ Աստուածածնի փողոցում Սարգիս կառապանի կամ Մաթոս բանւորի աղջիկը ստանում էր մի նոր շոր, մի նոր կարմիր թաշկինակ, Սառան երբէք չէր նախանձում։ Այդ նախանձը Կակայեան ուսումնարանի ազդեցութեան արգասիքն էր։ Առաջին օրից, երբ Կակայեան ուսումնարանը ընդունեց Սառային իբրև սանիկ, աղաների զաւակները աշխատեցին ակներև ցոյց տալ այն բոլոր զանազանութիւնը, որ տեղի ունէր Սառայի և իրենց մէջ։ Նրանք կարծես մի բարի գործ էին անում, երբ մի երկու խօսք էին ասում փոքրիկ Սառային, նրանք զարմացած, հեգնօրէն ժպտալով դիտում էին Սառայի մի քիչ կոպիտ վարմունքը, նրա անմաքուր ձեռքը և քթի տակից ծիծաղում... Սառան իւր փոքրիկ, բայց վերին աստիճանի զգայուն սրտով իսկոյն հասկացաւ այդ։ Նրան տանջում էր և գրգռում էր այդ հըպարտ վարմունքը և աւելի և աւելի սկսում էր ատել այդ փոքրիկ, ապագայ «տիրուհիներին»։ Որ Սառայի նախանձը, ատելութիւնը բնական չէին, ապացուցանում էր նրա վարմունքը իւր հաւասարների հետ։ Աղքատների զաւակները միշտ նրանում գտնում էին մի զօրեղ պաշտպան։ Սառան պատրաստ էր ժամերով նստել նրանց հետ, հարցնել, սովորեցնել դասերը և պարապմունքներից յետոյ խօսել նրանց հետ Աստուածածնի, և Սուրբ Թօրոսի փողոցների մասին, իրենց այնտեղ մնացած ընկերուհիների մասին. մտաբերել մօտ անցեալից իրողութիւններ, անցքեր, փաստեր...

Այսպէս անցնում էին Սառայի մանկութեան օրերը Կակայեան ուսումնարանի պատերում...

Հասաւ վերջապէս և ամառը, մօտեցան քննութիւնները։ Սառան ամբողջ օրերով պարապում էր. նա տարուայ ժամանակ աշխատողներից չէր. նա ամեն բան կարդում էր միայն մի անգամ. եթէ հասկացաւ՝—լաւ, եթէ ոչ՝ նա ձգում էր ձեռից գիրքը և չէր աշխատում բռնի ըմբռնել այն, ինչ որ չէր կարող մի անգամից հասկանալ. բայց լինում էին րոպէներ, երբ նա, կարծես ամեն ինչ աշխարհումս մոռացած, չէր բարձրացնում գլուխը գրքից։ Այդ րոպէներից էր և քննութիւնը։ Սառան աշխատում էր ամբողջ օրերով. նա ստէպ ստէպ պարապմունքների միջոցին յիշում էր օր. Զատիկեանի երեսը, նրա բարի, մեղմ, կարծես փայփայող հայեացքով աչքերը, յիշում էր և աւելի եռանդով շարունակում էր իւր պարապմունքները։ Վերջապէս հասան և քննութիւնները։ Սառան ամենից լաւ պատասխանեց վարժապետների հարցերին և ստացաւ առաջի պարգևը։ Այդ բաւականացրեց, շօշափեց նրա ինքնասիրութիւնը։ Նա ամբողջ այդ օրը գտնվում էր մի տենդային անսովոր յուզմունքի մէջ. նա վազում էր օր. Զատիկեանի մօտ, փաթաթվում էր նրա վզին, նայում էր աչքերին և յանկարծ բարձրաձայն ծիծաղելով փախչում էր նըրանից։ Եւ երբ հասաւ գիշերը, Սառան մտաւ իւր անկողինը պարգևը ձեռին, երկար նայեց նա այդ ոսկեզօծ տառերով գրքին, երկար դիտեց այդ գեղեցիկ նկարները, մինչև որ քնեց գիրքը ձեռին։

«Прав. Вѣст.»-ը հրատարակել է Սօֆիայի Կայսերական դիպլօմատիկական գործակալութեան կառավարչի արտաքին գործերի մինիստրին խփած հեռագրի թարգմանութիւնը. «Այսօր, հանդիսաւոր թափօրից յետոյ, որ խնամակալութեան, մինիստրութեան և խուռն բազմութեան ներկայութեամբ կատարեց բարձր սրբազնութիւն Կլիմէնտը: Էկզարխի ներկայացուցիչը, կառավարութեան անդամները և բօլղարական հասարակութեան ներկայացուցիչը այցելեցին գործակալութեանս և խնդրեցին, որ իրենց ամենայարգական շնորհաւորութիւնը մատուցանել առ ոտս Թագաւոր Կայսեր: Այդ միջոցին Ստամբուլօվը խնամակալութեան կողմից խօսած ճառի մէջ արտայայտեց բօլղարական ազգին ոգևորող առ Նորին Մեծութիւնը հաւատարմութեան ըզգացմունքները և յոյս յայտնեց, որ մեր Օգոստափառ Կայսրը կը բարեհաճի Բօլղարիային չզրկելու իւր բարեհաճ հովանաւորութիւնից»: Թագաւոր Կայսեր անուանակոչութեան առթիւ հեռագիրներ ստացուել են Բօլղարիայի և այլ կողմերից և Արևելեան-Ռումէլիայից:

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ալէքսանդրապօլ. Շիրակեցի. Ձեր խնդրած գիրքը մենք չունինք, այդ է պատճառը, որ մինչև օրս չենք ստացել:

Դղլար. Ն. Ս-ին. Ցաւում ենք, չենք կարող հրատարակել ձեր ուղարկած գրութիւնը:

Ախալցխա. Ս. Խ-ին.-Ձեր խնդրած բացատրութիւնը կը ստանաք:

Կ. Պօլիս. Ն. Տ-ին, Մինչև օրս սպասեցինք, բայց ձեր ուղարկածները չենք ստացել, հետևաբար ձեր «գործոյն ֆօւմանները» չենք կարող ձեզ յետ ուղարկել, որովհետև չենք ստացել: Եթէ ստանալու էլ լինինք «ֆօւմանները» չենք կարող յետ ուղարկել:

Տրանսպորտի գործով չենք զբաղվում:

Խմբագիր հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ «ԹԻՖԼԻՍ» ԿԱՅԱՐԱՆՈՒՄ.

կառքեր, որոնք ճանապարհին գիշերելու կայարաններ ունին:

Թիֆլիսից դուրս են գալիս առաւօտեան 8 ժամին. Վլադիկաւկաս գալիս են երեկոյեան 5 ժ.—11 րոպ. և 5 ժ. 43 րոպ. մէջը:

Վլադիկաւկասից դուրս են գնում առաւօտեան 9 ժամին: Թիֆլիս գալիս են երեկոյեան ժամի 4 և 44 րոպ. 5ժ. 25 րոպ. մէջ:

ՇԱՄՔՈՐԵՑԻՈՑ ԵԿԵՂԵՑ. Հաւլաբարում նորաշէն շինութեան մէջ, Տափի թաղի եկեղեցին՝ բաց է անում իւր ուսումնարանը և ընդունելութիւնը սկսվում է սեպտեմբերի 2-ին երեքշաբթի օրը:

3—2

Տպագրվում է և շուտով լոյս կը տեսնի Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆԻ աշխատութիւն ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԱԳԻՐՔ.

3—3

Թիֆլիսի ս. Գէորգ կաթուղիկէ եկեղեցու ծխական ուսումնարանումը աշակերտների ընդունելութիւնը սկսվում է 28-ից օգոստոսի ամեն օր, մինչև ժամի 2-ն:

4—4

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով յայտնում է 'ի գիտութիւն ընդհանրութեան, թէ այսօրուանից վարչութեան շինութեան մէջ առաւօտեան 9 ժամից մինչև կէս օրուայ 2-ը կարելի է տեսնել ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ 1887—1890 թ. չորս տարի ժամանակով ընտրութիւնների համար: Այդ ցուցակների մէջ սխալ կերպով մտցրած կամ բոլորովին թողած անձինք իրաւունք ունին ներկայացնել Վարչութեանը իրենց նկատողութիւնները սոյն սեպտեմբերի 7-ից մինչև 21-ը: Այդ նկատողութիւնները յետ այնորիկ կը ներկայացուին քաղաքային խորհրդին: 3—2

ՇԱՏ ՉԱՓԱՒՈՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԵԱՄԲ
ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՄ ՓՈՐՁԱՌՈՒ

ՀԱՇՈՒԱՊԱՀՆԵՐ,

Որոնք կարող են ԿՐԿՆԱՏՈՒՄԱՐ ՀԱՇՈՒԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ հիմնաւորապէս վարել առևտրական ամեն ճիւղերին վերաբերեալ հաշիւներ, թէ ՀԱՅՈՑ և թէ ՌՈՒՍԱՑ լեզուներով:

Ընդունում եմ նոյնպէս Ապացուցագրերի, հաշուեցոյցերի և հաշուեգրքերի երեսով ՀԱՇԻՒՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ պատուէրներ:

Իմ հասցէն՝ «Նոր-Դարի» Խմբագրութեան մէջ:

(բ) 20—8

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն Մարսէլի և Բաթումի մէջ

Չորեքշաբթի, սեպտեմբերի 10-ին, «ՄԻՆԳՐԵԼԻԱ» (Mingrelie) շոգենաւը, նաւապետ (ԺԻԲՈՒԷՆ) «Giboin» դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզօն, Օրդու, Սամսօն, Կ. Պօլիս և Մարսէյլ:

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում՝ պ. ԳԱՐԱՆԻՕՆԻՆ, Թիֆլիսում՝ պ. ՐԷՆՕՒԻՆ, նախկին գալէրէյա Արծրունիների № 103. 3—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ:

Աւանդելի առարկայք սոքա են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վերայ, 5) Առևտրական Թղթակցութիւն, 6) Առևտրական և մաքսային խանոնադրութիւն, 7) Գեղագրութիւն, ցանկացողների համար ևս 8) Ֆրանսերէն լեզու:

Ուսումը սկսուելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնները օգոստոսի 25-ից, ամենայն օր, երեկոյեան 5-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում՝ Սոլոլակում, Լաբարատորնայա փողոցի վերայ, Յովհաննէս Գորգանեանի տանը, № 11. Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ՁՐԻԱՊԷՍ եղբարց Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին՝—въ Тифлисъ С. П. Мануэльянцу.

10—8

ՊԱՀԵՍՏ
ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ
ԳՈՐԾԱՏՈՒՆ



ՖՐԻՍՏԵՐ ԵՒ ՐՕՍՄԱՆ

Նոր պատենտի տէր
կատարելագործուած
ԿԱՏԱՐԵԱԼ ԱՊԱՀՈՎԱՑՈՒՄՆ
Ծախվում է
ԺԱՄԱՆԱԿ ՏԱԼՈՎ

Միակ գործակալ՝ Է. Ֆ. Աուֆէրման. Թիֆլիս
Երևանեան հրապարակ, տ. Տէր-Աստուածատրեանցի

100—89

Իսկական կարեմեքենաներ

„ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՕՐԿՈՒՄ



ԱՐԺԱՆԱՑԱԾ
աշխարհի մէջ կարեմեքենաների բոլոր ցուցահանդէսներում
ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ
Կարեւոր ընկերներ տան տիկիններին և ազնիւ օգնականներ բոլոր արհեստաւորների համար

ԳՏՆՎՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում. Զինգերի ընկերութեան կենդրոնական պահեստում, Գօլօվինսկի պրօսպեկտի վերայ, Միրիմանովի տան և նրա բաժանմունքների մէջ:

Բագւում. Միքայելեան փողոցում, Միրզա Աւագեանի տ.
Քութայիսում. Բուլվարի դէմ, Չերեկովի տ.
Բաթումում. Պօլիցեյսկոյ փողոցում, Թէրզի օղլու տ.
Թեհրանում. Մարշ-Մէյդանի դէմ, բուլվարի վերայ:

և նրանց ճանապարհորդող գործակալների մօտ

արտօնութիւն ստացած
զգուշացէք
THE SINGER MFG. CO. N.Y.
TRADE MARK
կեղծիքներից
առևտրական դրօշմը.

ՄԻՋԻՆ ԵՒ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ ԶԻՆԳԵՐԻ ԵՒ ԸՆԿ. ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄՕՏ

Գ. ՆԷՅԴԼԻՆԳԵՐ

ԶԻՆԳԵՐԻ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԽՈՇՈՐ ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԵՏԵՒԵԱԼՆ ԵՆ

1) Մեքենաներն ունին ընդարձակ գործարան և համաշխարհային հռչակ: 2) Գները ամենաչափաւորներն են և միայն Զինգերի ընկերութեան մէջ: 3) Ամեն տարի ծախվում է մօտ 700,000 հատ: 4) Մեքենայի յաջողութեանը չէ կարողացել նմանեցնել ոչ մի կարեմեքենայի գործարան: 5) Թէ մեքենաները և թէ նրանց օգնական գործիքները միշտ լաւանում և կատարելագործվում են: 6) Կարելի է ընտրել ամենամեծ քանակութեամբ և ամեն տեսակ ընտանեկան, արհեստաւորների համար մեքենաներ նաև մասնագիտական մեքենաներ զինուորական հագուստներ կարելու համար: 7) Այս հռչակաւոր մեքենաները ամեն մարդ հեշտութեամբ կարող է ձեռք բերել: Գնողները կարող են, եթէ կամենում են դրամը հետզհետէ վճարել սակաւ քանակութեամբ, այն է շաբաթով, կամ ամսով և կամ ժամանակամիջոց ստանալ զրաւականով դրամը վճարելու համար: 8) Մեքենայի վերայ կատարելապէս և հիմնաւոր սովորելը ձրի է հմուտ վարպետուհիների համար:

Յ. Գ. Զինգերի և ընկ. բոլոր պահեստներում գտնվում են մեքենաներին պատկանելի գործիքները, ինչպէս են. ասեղներ, թել, մետաքս և այլ մեքենային պատկանելի իւղեղեններ ամենաչափաւոր գներով:

60—28

Дозволено цензурою. Тифлисъ, 4 го Сентября 1886 г. Տպարան Մ. Դ. Ռօտինեանց և ընկ. Типографія М. Д. Ротиніанцъ и К° Гол. пр., д. № 41